ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/87

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, քննելով «Արտիֆեքս» ՍՊԸ-ի կողմից 16.10.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/87 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Արտիֆեքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արտիֆեքս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 16.10.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը՝

«Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Արշակունյաց պողոտա-Նոր Շիրակի փողոց-Արտաշատի մայրուղու ճանապարհատվածի լուսաանդրադարձող, սառը եղանակով կիրառվող պլաստմարկեր /կամ այլ համարժեք/ նյութերով ճանապարհային գծանմուշների իրականացման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցության նպատակով հայտ է ներկայացրել միայն «Արտիֆեքս» ՍՊԸ-ն, ով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

01.10.2018թ. գնահատող հանձնաժողովի կողմից կայացվել է թիվ 3 արձանագրությունը, որով «Արտիֆեքս» ՍՊԸ-ի հայտարարությունը համարվել է իրականությանը չհամապատասխանող, այն պատճառաբանությամբ, որ «Արտիֆեքս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով /դրոշմանիշային վճարի մասով/ ունի ժամկետանց պարտավորություն 91,000 ՀՀ դրամի չափով:

Նույն արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Արտիֆեքս» ՍՊԸ-ի հայտը և գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընկերության կողմից բողոքի իրավական հիմքեր և հիմնավորումներ նշվել է հետևյալը՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

Վերոգրյալից անհրաժեշտ է հասկանալ, թե որո՞նք են հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները և արդյո՞ք «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշների վճարը հանդիսանում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ:

Այսպես՝

2018թ. հունիսի 11-ի ՀՀ կառավարության **Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին թիվ 702-Լ որոշման 11-րդ կետի 2-րդ ենթակետի՝** Կոմիտեի խնդիրներն են՝ պետական հարկերի և վճարների վճարման նկատմամբ հսկողության իրականացումը:

Համաձայն Հարկային օրենսգրքի 6-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝

1) պետական հարկեր, որոնց տեսակներն են՝

ա. ավելացված արժեքի հարկը (այսուհետ նաև՝ ԱԱՀ),

բ. ակցիզային հարկը,

գ. շահութահարկը,

դ. եկամտային հարկը,

ե. բնապահպանական հարկը,

զ. ճանապարհային հարկը,

է. շրջանառության հարկը,

ը. արտոնագրային հարկը.

2) տեղական հարկեր, որոնց տեսակներն են՝

ա. անշարժ գույքի հարկը,

բ. փոխադրամիջոցների գույքահարկը:

Հայաստանի Հանրապետությունում չեն կարող սահմանվել այնպիսի հարկեր, որոնք նախատեսված չեն սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով:

Համաձայն Հարկային օրենսգրքի 7-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝

1) պետական վճարներ, որոնց տեսակներն են՝

ա. պետական տուրքը,

բ. բնօգտագործման վճարը,

գ. սոցիալական վճարը,

դ.ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) պարտադիր վճարը և օգտագործման պարտադիր վճարը,

ե. հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարը,

զ. կենսաթոշակային վճարը.

2) տեղական վճարներ, որոնց տեսակներն են՝

ա. տեղական տուրքը,

բ. տեղական վճարը:

Հարկային օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածները հստակ սահմանում են այն բոլոր հարկերի և վճարների տեսակները, որոնց նկատմամբ հսկողություն է իրականացվում

հարկային մարմնի կողմից, այլ կերպ ասած վերոգրյալից հետևում է, որ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ չէ դրոշմանիշային վճարը:

Ասվածը հիմնավորվում է նաև 2017թ. հուլիսի 19-ի ՀՀ կառավարության հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի ձևը սահմանելու մասին թիվ 228-Ն հրամանով, որով սահմանվել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի ձևը:

Նշված որոշման հավելվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով (այդ թվում՝ հարկային մարմնի համակարգի զարգացման ֆոնդի միջոցների գծով) պետական բյուջեի հանդեպ պարտավորությունները կազմում են հետևյալ հարկատեսակները՝

ԱԱՀ

Շահութահարկ

Եկամտային հարկ

Ակցիզային հարկ

Շրջանառության հարկ

Արտոնագրային հարկ

Բնապահպանական հարկ

Ոչ ռեզիդենտի շահութահարկ

Սոցիալական վճար

Պետական տուրք

Բնօգտագործման վճար

Այլ հարկային եկամուտներ

Ընդամենը

Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ 2017թ. հուլիսի 19-ի ՀՀ կառավարության թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշների վճարը

որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն նախատեսված չէ:

Ավելին, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանի համաձայն՝ սահմանվել է վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

Այստեղ ուշագրավ է այն հանգամանքը, որ հայտ ներկայացնելիս «Արտիֆեքս» ՍՊԸ-ն առաջնորդվել է հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում առկա տեղեկատվությամբ, որից հստակ երևում է, որ հայտ ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկաուտների գծով «Արտիֆեքս» ՍՊԸ-ն որևէ հարկային պարտավորություն չի ունեցել, դեռ ավելին համաձայն նույն քաղվածքի «Արտիֆեքս» ՍՊԸ-ն ունեցել է մոտ 40,000 ՀՀ դրամի չափով գերավճար: /Ծանուցում՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտում վկայակոչված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանը/:

Այսինքն, ևս մեկ հիմնավոր փաստարկ, որ դրոշմանիշային վճարը չի հանդիսանում հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ, հակառակ պարագայում հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում առանձին տող կլիներ նաև դրոշմանիշային վճարի մասով:

Նշված փաստերը հիմք են հանդիսանում հաստատապես հայտնելու, որ 01.10.2018թ. գնահատող հանձնաժողովի արձանագրությունը անհիմն է, քանի որ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը չի հանդիսանում հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ, հետևաբար անկախ պարտավորության առկայությունից կամ բացակայությունից այդ հիմքով մասնակցի հայտը ենթակա չէր մերժման:

Նմանատիպ իրավական դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը թիվ ՍՑ-ԷՍ-2018/133 որոշմամբ:

Վերոգրյալի ամփոփումից հետևում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Արշակունյաց պողոտա-Նոր Շիրակի փողոց-Արտաշատի մայրուղու ճանապարհահատվածի լուսաանդրադարձող, սառը եղանակով կիրառվող պլաստմարկեր /կամ այլ համարժեք/ նյութերով ճանապարհային գծանմուշների իրականացման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովը չի կիրառել 2018թ. հունիսի 11-ի ՀՀ կառավորության թիվ **702-L որոշումը**, ՀՀ Հարկային օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածները, 2017թ. հուլիսի 19-ի ՀՀ կառավարության թիվ 228-Ն հրամանը, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանը, որի հետևանքով խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, ինչն էլ հանգեցրել է «Արտիֆեքս» ՍՊԸ-ի իրավունքների ոտնահարմանը և խոչընդոտներ են ստեղծել գնման ընթացակարգին վերջինիս մասնակցության համար:

Համաձայն՝ Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի՝ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Համաձայն՝ Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին»:

Ընկերությունը ներկայացված բողոքով խնդրել է դադարեցնել «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 01.10.2018թ. կայացված թիվ 3 արձանագրության 1.1 և 1.4 կետերը, ինչպես նաև «Արտիֆեքս» ՍՊԸ-ի հայտարարությունը համարել իրականությանը համապատասխան:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 19.10.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Երևանի քաղաքապետարանը, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 23.10.2018թ. թիվ 02/61-75479h գրությամբ հայտնել է, որ Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում «Արտիֆեքս» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Երևանի քաղաքապետարանը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում տրամադրված եզրակացության համաձայն՝ «Արտիֆեքս» ՍՊԸ-ի հայտարարությունը՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին, համարվել է իրականությանը չհամապատասխանող:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, սույն գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Արտիֆեքս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (24.09.2018թ.) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ 91 000 ՀՀ դրամի չափով (կից տրամադրվում է Կոմիտեի կողմից տրված եզրակացության պատճենը), գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով, 44-րդ կետով, հրավերի 7.15-րդ

կետով, որոշեց մերժել «Արտիֆեքս» ՍՊԸ-ի հայտը և օրենքով սահմանված կարգով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով սույն գործում առկա փաստական հանգամանքներով և վերը նշված իրավական նորմերով՝ մերժելով «Արտիֆեքս» ՍՊԸ-ի հայտը, կայացրել է իրավաչափ որոշում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 19.10.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/87 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԽ-ԱՄ-2018/87 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար քաղաքի Արշակունյաց պողոտա-Նոր Շիրակի փողոց-Արտաշատի մայրուղու ճանապարահատվածի լուսաանդրադարձող, սառը եղանակով կիրառվող պլաստմարկեր /կամ այլ համարժեք/ նյութերով ճանապարհային գծանմուշների իրականացման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 24.09.2018թ. հայտ է ներկայացրել «Արտիֆեքս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ «Արտիֆեքս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 28.09.2018թ. տրամադրված

եզրակացության համաձայն՝ «Արտիֆեքս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 91 000 ՀՀ դրամի չափով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.10.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Արտիֆեքս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով «Արտիֆեքս» ՍՊԸ-ի 16.10.2018թ. բողոքը, Երևանի քաղաքապետարանի 23.10.2018թ. թիվ 02/61-75479h գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում

հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու*** և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված ***հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող*** կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:***

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար քաղաքի Արշակունյաց պողոտա-Նոր Շիրակի փողոց-Արտաշատի մայրուղու ճանապարահատվածի լուսաանդրադարձող, սառը եղանակով կիրառվող պլաստմարկեր /կամ այլ համարժեք/ նյութերով ճանապարհային գծանմուշների իրականացման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***24.09.2018թ.*** հայտ է ներկայացրել «Արտիֆեքս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ «Արտիֆեքս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 28.09.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Արտիֆեքս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 91 000 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.10.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Արտիֆեքս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

ԳԲԽ-ԱՄ-2018/87 բողոքի քննության շրջանակներում Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է 24.09.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածք, որի համաձայն՝ Ընկերությունը 24.09.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 01.11.2018թ. թիվ 03/11-1/65995-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին համապատասխան՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածներով նախատեսված են պետական հարկերը և պետական վճարները, որոնց նկատմամբ հսկողությունը վերապահված է հարկային մարմնին:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են հարկային եկամուտները:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ *դրոշմանիշային վճարը* զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով նույն *օրենքով սահմանված կարգով և չափով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է*: Նույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, մասնավորապես՝ դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում դրոշմանիշային վճար

վճարողից (հարկային գործակալից) ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում դրոշմանիշային վճար վճարողին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N526-Ն որոշմամբ հաստատված կարգով հարկային մարմնի կողմից տրամադրվել են տեղեկություններ հարկ վճարողների ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Արտիֆեքս» ՍՊԸ-ն պարտավորությունները կատարելիս առաջնորդվել է բացառապես էլեկտրոնային համակարգի անձնական գրասենյակում անձնական հաշվի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն ընկերությունը ժամկետանց պարտավորություններ չի ունեցել, ինչպես նաև հաշվի առնելով դրոշմանիշային վճարների պարտավորությունները որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ համարելու վերաբերյալ հարկ վճարողի իրազեկված չլինելու, իսկ տեղեկանալուն պես այն կատարելու հանգամանքը, ուստի «Արտիֆեքս» ՍՊԸ-ի պարագայում ժամկետանց հարկային պարտավորությունների հանգամանքը, գնումների գործընթացին մասնակցության առումով, չդիտարկել որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություն:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք

աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Այսպիսով, ուսումնասիրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 28.09.2018թ. տրամադրված եզրակացությունը, 24.09.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 01.11.2018թ. թիվ 03/11-1/65995-18 գրությունը, գտնում եմ, որ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 28.09.2018թ. տրամադրված եզրակացությամբ արձանագրված «Արտիֆեքս» ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորությունը, որն ըստ էության հանդիսանում է դրոշմանիշային վճար, տվյալ պայմաններում չի դիտարկվում

որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություն, հետևաբար գտնում եմ, որ Ընկերության հայտը սույն հիմքով ենթակա չէ մերժման:

Հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ «Արտիֆեքս» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Արտիֆեքս» ՍՊԸ-ի կողմից 16.10.2018թ. ներկայացված բողոքը բավարարել, մասնավորապես՝

1. Պարտավորեցնել «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 01.10.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.1 ենթակետով կայացված՝ «Արտիֆեքս» ՍՊԸ-ի հայտարարությունը իրականությանը չհամապատասխանող գնահատելու մասին որոշումը,

2. Պարտավորեցնել «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 01.10.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.4 ենթակետով կայացված՝ «Արտիֆեքս» ՍՊԸ-ի հայտը մերժելու և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ